«Թոգարմա» ՍՊԸ-ի միջև 30.04.2024 թվականին կնքված իրավաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը համաձայն որի՝ պայմանագրի գինը կազմել է 200.000 ՀՀ դրամ:

ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ փաստաբանի վարձատրության խելամտության հարցը որոշելիս անհրաժեշտ է ամբողջության մեջ հաշվի առնել գործով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալը (ապացույցներ հավաքելու և ներկայացնելու անհրաժեշտությունն ու այդ գործողությունները փաստացի կատարելու հանգամանքը, գործի քննությանը մասնակցության աստիճանը), գործի բարդությունը (վիճելի իրավահարաբերության բնույթը, գործի քննության տևողությունը), նմանատիպ գործերով պրակտիկայում ընդունված փաստաբանական ծառայության մատուցման դիմաց վճարվող գումարի չափը, ինչպես նաև դատական ակտով բռնագանձվող գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափի հարաբերակցությունը (*տե՛ս, Ֆերդինանտ Առաքելյանն ընդդեմ Հարություն Պետրոսյանի թիվ ԵԿԴ/1587/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.06.2012 թվականի որոշումը, կամ թիվ ԵԱՔԴ/0554/02/11 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.07.2013 թվականի որոշումը):*

Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ դատական ծախսերը պետք է կատարվեն փաստացիորեն անհրաժեշտաբար և, որ դրանց քանակը ողջամիտ է *(տե՛ս, Ֆիլիպն ընդդեմ Հունաստանի թիվ 1 27.08.1991 թվականի վճիռը, Շարքեր Ա, էջ 25, կետ 74, կամ Նիկոլովան ընդդեմ Բուլղարիայի 25.03.1988 թվականի վճիռը):*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով նախատեսված ծախսերի փոխհատուցման չափը որոշելիս դատարանը հիմք է ընդունում ծախսերի ողջամիտ չափը, որը որոշվում է՝ ելնելով փաստաբանի կատարած աշխատանքի ծավալից, գործի բարդությունից, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված փաստաբանական գործունեության վճարների միջին գնացուցակից, ինչպես նաև դատական ակտով բռնագանձման ենթակա գումարի և պահանջվող փաստաբանական վճարի չափերի հարաբերակցությունից:

Դատարանը գտնում է, որ սույն գործով՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար, պետք է համարել 50.000 ՀՀ դրամը: Հետևաբար հայցվորից հօգուտ պատասխանողի ենթակա է բռնագանձման 50.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ, 109-րդ, 168-րդ, 179-րդ, 188-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ և 198-րդ, ինչպես նաև 27.2-րդ գլխի կանոններով՝ Դատարանը

ՎՃՌԵՑ

1. «Ագաստ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի՝ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի՝ «Ագաստ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, մերժել:

2. «Ագաստ» ՍՊԸ-ից հօգուտ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բռնագանձել 50.000 ՀՀ դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար:

Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում